ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 11 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի հրահանգչի /0,5 դրույք/ թափուր տեղի համար:

Ֆիզկուլտուրայի հրահանգչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ հիմնադրի հաստատած դրույքաչափի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով ՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը պատասխանատու աշխատակցին պետք է ներկայացնի.

1. դիմում

2. կրթության մասին փաստաթուղթ

3. անձը հաստատող փաստաթուղթ

4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/ առկայության դեպքում/

5. ինքնակենսագրություն

6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի

7. այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ՝ զինվորական գրքույկ

9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/

10. որակավորման տարակարգ /առկայության դեպքում/:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից 2023թ. մայիսի 4-ը ներառյալ՝ ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:30-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 10-ին՝ ժամը 10:00-ին թիվ 11 մսուր-մանկապարտեզում (հասցե՝ Կոմիտաս 11):

Տեղեկությունների համար զանգահարել 077-91-95-32: